ՆՈՐ-ԴԱՐ

№ 140 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Շաբաթ, 9 Օգոստոսի. 1903 Շաբաթ, 9 Օգոստոսի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 140

Տարին 10 րուբ. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1ր., հասով 5 կ. Բաժանորդ կն գրւում միմիայն խմբագրատանը՝ Դաւիդով.փողոց, № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բառին 2 կ., մեկնաների համար կրկնապատիկ։

Կիրակի, օգոստոսի 10-ին, Վանքի աւագ եկեղեցում, պատարագից յետոյ, օրուայ ժամը 12-ին, կատարուելու է հանդիսաւոր հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ յաւերժահիշատակ

Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՍՐԲԱԶԱՆԻ

համար, որի մասին այսու ծանուցանւում է ի պիտութիւն հայ հասարակութեան ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ։ 3—3

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՆՉԵՒ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԸ

ԱՅՆ ԴԺԲԱԶԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ,

ՈՐՈՆՔ ՊԱՏՃԱՌՈՒՄ ԵՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ԵՒ ՇՈՓԵՆԱՒԵՐԻ ՎՐԱՅ

կատարւում է «Ռոսսիա» Ընկերութեան Վարչութեան մէջ (С.-Петербургъ, Морская, 37) Ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքում (Сергіевская ул., № 6) և բոլոր գործակալների մօտ Կայսրութեան քաղաքներում։

(197) 6—6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Երկու խօսք մեր ապագայ մասնագէտներին։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Յալթրից։
Մամուլի չուրջը։
Թղթակցութիւններ.—Նամակ Պարսկաստանից.—Թեհրան։
Քաղաքական.—Ծայրագոյն Արևել-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՆԴՈՒԿՈՒՄ

— Ասա, խնդրեմ, ինչո՞ւ չես հաւատալ, որ ես երբէք Աշխէնի ձեռքը չեմ խնդրել, ասաց Մանուկեանը յանկարծ կանգ առնելով ուղղակի Փանոսեանի առաջ, որն այդ ժամանակ կուռքի նման նստած, նայում էր նրա չարժումունքներին։

—Չեմ հաւատում,—կարճ ու սառն կերպով նկատեց Փանոսեանը։

—Սիրբ ինչո՞ւ է։

Այն պատճառով որ սուտ ես ասում։

—Դէ, դու ինձ ուզում ես ուղղակի զայրացնել,—բղաւեց Մանուկեանը և նորից սկսեց քայլել։

—Փոխանակ զայրանալու, աւելի լաւ է լսես։—Ինթադրենք թէ դու չես սիրել Աշխէնին և չես էլ խնդրել նրա ձեռքը։ Այժմ որ վճռել ես ամուսնանալ օրիորդ Բաղալեանի հետ, հաւանել ու սիրել ես նրան։ Ճիշտն ասա։ Գիտես ինչու եմ հարցնում։ Հարցնում եմ, որովհետև ես չեմ հասկանում առանց փոխադարձ սիրոյ ամուսնութիւն,...

— Եթէ չհաւանէի ու չսիրէի, չէի վճռիլ ամուսնանալ, չատակց պատասխանեց մանուկեանը։

Նա միքանի վայրկեան առաջ քաշից աթոռն ու նստեց և աչքերաւ էր չորնայել բնկերոջ դէմքին։

— Սուտ ես ասում։ Այո, սուտ ես ասում, դու կարող ես ուրիշին խաբել, բայց ոչ երբէք ինձ, որովհետև օրիորդ Աշխէնին չսիրողն ու չհաւանողը երբէք չէ կարող հաւանել ու սիրել օրիորդ Բաղալեանին։ Ի սէր Աստուծոյ, ասա

*) Տես «Նոր Դար» № 139

քում։ Մակեդոնական ապստամբութեան արձագանքը Բուլղարիայում։ Մակեդոնական ապստամբութիւնը

Էմբերների գործը։
«Նոր-Դար»-ի հեռագրներ։
Բանակրական.—Պահպանում։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 8-ն օգոստոսի, 1903 թ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՅ ՄԱՍՆԱԳԻՏՆԵՐԻՆ

—

Բ.

Շատ անգամներ առիթ ենք ունեցել խօսելու մեր գիւղատնտեսական յետամնաց ու անզարգացած վիճակի մասին իւր բոլոր ստորաբաժանմունքների մէջ։ Մասնաւոր երկրագործները, անասնաբոյծները, մեղաւարոյծները, և այլն, գործունէութեան ընդարձակ ասպարէզ ունեն իրենց մասնագիտութիւնները գործադրելու համար գիւղական աշխատութիւնների բոլոր ճիւղերում։

Այն հանգամանքը, որ ուսանողութեան դիմոյ մեր երիտասարդութեան մի բաւական նշանաւոր մասը գաւառական բարքերից ու գիւղերից է, առաջին դիւրութիւն է տալիս, գիւղատնտեսութեան այս կամ այն ճիւղը ուսումնասիրելուց յետոյ, իւր հայրական յարկը վերադառնալու և տնտեսական գործառնութեան ղեկը իւր ձեռքն առնելու։

Հաւանաբար հանդիպած, որ Կովկասի ու Անդրկովկասի հայ համայնքները մեծ նեղութիւն են քաշում վարելահողերի նուազութեան պատճառով, միւս կողմից ուշադրութիւնից չպէտք է վրիպեցնել նաև այն հանգամանքը, որ գաւառական քաղաքներում ու գիւղերում կան բազմաթիւ բնատնիքներ, որոնք առագին տարածութեամբ հողեր ունեն և դրանք տասնեակ տարիներով մնում են անմշակ տէրերի ծայրայեղ անհոգութեան, գործին անգիտակ լինելու և նիւթական սուղ միջոցների պատճառով։ Այդպիսի հողատէրերի կարգին են պատկանում հայ ազնուական կալուածատէրերը, որոնց հարիւրաւոր դեսեատին հողերը,— շատ անգամ ամենանպաստաւոր պայմաններով օժտուած,— կարելի է ձեռք բերել ամենաչնչին վարձով և տասնեակ տարիներով չահագործել։

Յաջողութիւն գտնելու միակ պայմանը ինչպէս երկրագործութեան, նմանապէս և գիւղատնտեսական միւս զբաղումների մէջ, մենք համարում ենք գիւղում ապրելու և գործելու մտքի հետ հաշտուելը։

Այդ կեանքի հետ է, որ մեր մասնագէտ երիտասարդութիւնը չի կարողանում ոչ մի պայմանով հաշտուել, այդ շրջապատից է, որ ամենից աւելի նա խորշում է, չատ անգամ առանց նոյն իսկ իրեն բացատրութիւն տալ կարողանալու։ Բաւական է վերացրնել այդ անտեղի նախապաշարմունքը, բաւական է մեր մասնագէտ երիտասարդութիւնը համոզել նաև այն հանգամանքը, որ գաւառական քաղաքներից ու գիւղերից ձայնի բազմամբոխ քաղաքներից ձեռք քաշել և հաստատուել անշուք ու համեստ գիւղում,—գործ ստեղծելու և արդիւնաւէտ գործ ձեռնարկելու բոլոր դժուարութիւնները ժամանակի ընթացքում իրենք իրենց կվարձուին անզուսպ եռանդի և յամառ աշխատութեան առաջ։

Անկասկած, իւրաքանչիւր մասնագէտ նուիրելով իրեն գիւղական տնտեսութեան այս կամ այն ճիւղի զարգացման, նա աշխատում է իւր սեփական շահերի համար։ Սակայն, որքան էլ նրա գործունէութիւնը մասնաւոր բնաւորութիւն ունենայ, որքան էլ նա զեկավարուելիս լինի զուտ իւր անձնական շահերով, այնուամենայնիւ նրա ներկայութիւնը գիւղական հասարակութեան մէջ, նրա մշտական յարաբերութիւնն ու շփումը ժողովրդի հետ կարճ ժամանակի ընթացքում առաջ կը բերեն զգալի փոփոխութիւն գիւղացու նիստուկացի և կատարած աշխատանքների մէջ։ Մինչդեռ բոլորովին այլ տեսարան կհատարուի և արդիւնքը կկրկնապատկուի, կեռապատկուի, երբ գիւղը քաշուող երիտասարդութիւնը նկատի կունենայ հանրութեան ծառայելու մտքերով, և իւր անձնական ակնկալութիւններին ու ձգտումներին կմիացնի նաև հա-

ձնեց բաժակները։

— Դէհ այժմ լսիր,—բաժակը երկրորդելուց յետոյ, դիմեց Փանոսեանն ընկերոջ և սկսեց արագ-արագ ծամել չոր ու սև հացի տաք կտորը, որ, ինչպէս գարեջրի մաղա, դրել էին առաջները։—Դու հո գիտես, որ ես քո ամուսնութիւնից, ոչ օգուտ ունեմ, ոչ վնաս։

— Այդպէս է։

— Այս էլ գիտես, որ եթէ դու օտար կամ մի պատահական ծանօթ լինէիր, ինձ համար կատարեալպէս միևնոյն պիտի լինէր թէ ում վայ ես պսակւում, օրիորդ Բաղալեա՞ն թէ մի ուրիշի։ Ես ամուսնացած մարդ եմ, աչք չունիմ ամենևին քո հարսնացուներիդ վրայ, պարապում եմ իմ անձնական գործերով և կախում չունիմ ոչ քո Բաղալեանից և ոչ նրա նմաններից։ Իմ ճակատի քրտինքով և ապնի ճանապարհով աշխատած կոպէկն աւելի բարձր եմ դասում, քան նրա միլիոնները, որ Աստուծոյ ողորմութեամբ այսօր կայ, վաղը չի լինիլ, որովհետև քամու բերածը քամին կր տանի։ Գիտես, որ Բաղալեաններին և նմաններին տեսլով տակ եմ և բրես եմ գարձրել, որպէս կեղեքիչներից, հարստահարողներից և իրենց հարստութեամբ ու դիրքով հանդերձ, անբարոյականութեան և ապիտութեան տղմի մէջ խրուած անբաններից։ Ես չեմ կարող տանել, երբ տեսնեմ, որ դու ծունկ չորած այդ կրեսոսի առաջ, սկսես խնկարկել և երկրպագել նրան միայն այն պատճառով, որ հնչտ ճանապարհով մի քանի կոպէկի աէր լինիս... Բայց մտածիր. քո այդ քայլը սպառնում է ոչ միայն սևացնել կեանդդ, այլ և փչրել ամբողջ ապագադ, հիմնայատակ անել նահապետական ըն-

տանեկան օջախդ. խորտակել քո հարխատուր ծնողների յոյսերը...

Փանոսեանը կանգ առաւ, վառեց ծխախոտն ու չարունակեց.

— Եթէ դու գնայիր աղքատանոց ու վերցնէիր այնտեղից ցնցոտիներով փաթաթուած և արեակէզ եղած մի գաղթական հայ աղջիկ և հետը պսակուէիր, ես կր համբուրէի ճակատդ։ Եթէ դու մանէիր մի հասարակաց տուն և դուրս քաշէիր այնտեղից անբարոյականութեան անդունդի ծայրին կանգնած մի գոհի և պսակուէիր հետը, ես թերևս հեչտութեամբ հաշտուէի արածիդ հետ։ «Ես կասէի, որ դու որպէս գաղափարական և առաքինի մարդ, որպիսին ներկայումս չկայ կամ գժուար է գտնել, վճռել ես քեզ զոհել այն քաղցր գիտակցութեամբ և յուսով, որ գոնով բարձրացնում ես մի ընկածի, ազատում ես կորստեան ճանապարհի վրայ կանգնած մի անմեղ զոհի։ Դու այստեղ, երբ դէպք էմն ես բախիր ես գործում առանց քո անձնականն 'ի նկատի ունենալու։ Ես յամենայն դէպս, քո այդ վարմունքը մարդասիրութիւն և անձնազոհութիւն... ուղղակի մի հերոսութիւն կհամարէի։ Բայց ինչ ես գործում դու ներկայ դէպքում։ Հարբուտուիթիւն ձեռք բերելու համար, դու գիմում ես ամենակեղտոտ և սուր միջոցի, դու գոհում ես ամեն բան և' սէր, և' սիրող սիրա, և' ազատութիւն, և' անձնական պատիւ... Ինչդ քեզ տորկացնում ես Բաղալեանի նման մի ապականուած մարդու առաջ, որն ամեն րոպէ երեսիդ պիտի խփէ, որ դու ապրում ես իր հաշուով և իր փողերով։ Դու մի փալաս ես դառնալու սիրած կնոջդ առաջ, որը կարևոր դէպքում աւելորդ չի համարիլ յիշեցնելու

Ծրագրում հետևյալ հարցերն են դրված. 1) Ֆինանսական տարվա հաշվետվության հաստատում. 2) Ընկերության կանոնադրության փոփոխություն. 3) Ընկերության վարչության և ստուգիչ հանձնաժողովի ընտրություն. 4) Ընկերության անդամների ընդունում. 5) Ընկերության անդամների կարգապահական պատասխանատվության հարցեր. 6) Ընկերության անդամների կարգապահական պատասխանատվության հարցեր. 7) Ընկերության անդամների կարգապահական պատասխանատվության հարցեր. 8) Ընկերության անդամների կարգապահական պատասխանատվության հարցեր. 9) Ընկերության անդամների կարգապահական պատասխանատվության հարցեր. 10) Ընկերության անդամների կարգապահական պատասխանատվության հարցեր.

*) Տես «Նոր-Դար» № 139:

— Ես ոչ մի բան չեմ հասկանում, — ասաց Ռոզան, ուսերը թոթվելով:

— Ես էլ, — ասաց Ռոզան:

— Ես էլ, — ասաց Ռոզան:

— Ես էլ, — ասաց Ռոզան

ԱԹԵՆՔ.—Մինիստր-նախագահ Բալլին հաղորդել է ամերիկեան ներկայացուցիչներին, որ՝ համաձայն յունական հիւպատոսների ուղած տեղեկութիւնների՝ Մակեդոնիայում, Կրուչհայում ուժանակով ոչնչուած են յունական եկեղեցին ու ուսումնարանը և հրդեհուած է 322 յունական տուն. ապահուած են մի քանի յոյներ։ Բալլին խնդրում է ամերիկեաններին վերջ դնել անկարգութիւններին, որոնցից յոյները աւելի են վնասում, քան թէ միւս քրիստոնեաները ու թիւրքերը։

Գ. ՊՈԼԻՍ.—Այն լուրը, թէ Մոնաստիրի ռուսական հիւպատոսարանի կառավարիչը սպանուած է և Սկլատիկի ուղղ հիւպատոսը անյայտացել է—քոլորովին մացառծին է, ինչպէս նաև Սկլանիկի և Ուսկիւբի միջև գնացքների երթեւեկութեան դադարեցման և այդ գծի վրայ մի դնացք պայթեցնելու լուրերը։

ՍՈՖԻԱ.—Բուլղարական հեռագրական գործակալութիւնը յայտարարում է, թէ բուլղարական զօրքի մի մասի դէնքի տակ առնելու լուրը անհիմն է։

Կ. ՊՈԼԻՍ.—Ռուսական ծովային գործակալը ռուսական առանցիններով նաւասրմին ընդառաջ է գուրս եկել։

ԼՈՆԴՈՆ.—Սալիզբիւրիի առողջական վիճակը համարեա անյուսալի է։

Խմբագիր հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Թիֆլիսի Վանքի եկեղեցու աւագ սարկաւագը, այժմ Նորընծայ Արշակ Յարութիւնեանց, կիրակի, ամսոյս 10-ին մատուցանելու է նոյն Վանքի եկեղեցում իւր Անդրանիկ Սուրբ պատարագը։ Այս մասին յայտնելով Վանքի եկեղեցւոյ յարգելի ծխականներին և ժամաւորներին, խնդրում ենք չնորհ բերել։ Սուրբ պատարագը սկսուելու է ժամի $10^{1}/_{2}$-ին։

Ղ. ա. ք. Խարազեանց

Երեսփոխան՝ Ի. Բաղդասարեանց

(220) 2—2

ՆՈՐՈՒԹԻՒՆ

քրտինքը եւ ևրա հոտը ծծում է, կնշանակէ ոչընչացնում է

չուռով և հիմնովին ոտներից, ձեռներից, կոան տակից, այտուց մասից, պահպանում է հագուստը, ոտնամանները փչանալուց, ոտներն եփուելուց և զովացնում է գերազանց հոտ ունեցող և անպայման անվնաս

ՍՊԱՌՎԱԼԱԿՈՒ

«ՍՈՒԴՈՐԻՆ»

դեղը թիթեղեայ արկղիկներ մէջ, որոնց երեսին մաղ կայ

դեղը ցանելու համար մարմնի վրայ, գուլպաների և ձեռնոցների մէջ։ Դինը 30, 50 և 90 կ., 2 արկղիկը (30 և 5 կ.) ուղարկում է ոտանց կանխավճարի փոստով 1 ր. վճարով։ Գլխաւոր պահեստը Ասլ. Կովալսկու դեղատան մէջ Վարշաւում, Գրանիչնայա 10. խնդրում ենք պահանջելիք դեղատներում և դեղատներին և պարֆիւմերի մագազիններում «Սուդորին» գերազանց ներգործման և անվնասակարութեան համար ֆիրմայի երաշխաւորում է։

M. 22429. 12—9

Всякій

можетъ заработать легко и честно до 400 руб. мѣсячно, безъ особыхъ знаній, и расходовъ. Посылайте только скорѣй Вашъ адресъ на U. i 3 an das

Annoncen-Bureau des Merkur

in Mannheim, Meerfeldstrasse 44.

(211) 50—6

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ այսու յայտարարում է, որ ինքը նշանակել է անուրդ ներկայ 1903 թուականին, օգոստոսի 12-ին, ժամը 12-ին մատակարարելու մինչև 400 քառակուսի սաժէն փայտ 4 կտորի վրայ հաշուած չափով մի տարուայ մէջ բաղարային հաստատութիւնների, Թիֆլիսի տեղական կոմանդի և Թիֆլիսի կոմենդանտի վարչութիւնների համար։ Փայտի մատակարարումը կապալով վերցնել կամեցողները կարող են պայմանների հետ ծանօթանալ Վարչութեան առաջին բաժանմունքի կանցելեարում ամեն օր մինչև օրուայ ժամը 2-ը բայի կիրակի և տօն օրերից։ 3—2

(221)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул. № 9)

Առևտրական կուրսերի նպատակն է մանուածական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներին ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են. 1) *Առևտրական Տնտեսութիւն,* 2) *Առևտրական Թուաբանութիւն* 3) *Հաշուապահութիւն* (պարզ, կրկնակի և բանկային), 4) *Թուաբանութիւն համրիչի վրայ* 5) *Առևտրական Թղթակցութիւն,* 6) *Առևտրական և մերկանտիլ կանոնագրութիւն* և 7) *Դեղագրութիւն* (*վատ ձեռքի* почеркъ—*ուղղելը*)։ — *Ուսումն սկսուել է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում. Սոկոլոլում, Ալէքսանդրէ Փրիլուկովի տանը № 9, Լերմոնտովսկայա փողոցում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ* **ԶՐԻԱՊԷՍ** *ուրսեր հիմնողի տանը։ Օտարաքաղաքացիք գիմում են՝* Въ Тифлисъ, С. П. Мануэльяну.

Զբի ուսումն ցանկացողներին զրող մանկնայի վրայ։ Պարապ (188) *նները կուրսերում լինում են ամեն օր։* 25—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ Նորին Գերազանցութիւն ֆինանսների Պարոն Մինիստրի համաձայնութեամբ անվաւերական են ճանաչուում Թիֆլիս քաղաքի երրորդ փոխառութեան 1000 րուբլանոց օբլիգացիաները, որոնք չափշտակուած են քաղաքային վարչութեան պրամարկից 1901 թուի սեպտեմբերի 23-ին 529000 րուբլու իրենց իսկական արժողութեամբ ընդ № № 155—159, 161—346, 348—457, 459—581 և 583—750, ընդամենը 592 թիւրեի։

Այս անվաւերական օբլիգացիաների վրայ չկայ քաղ. վարչութեան հաշուապահի ստորագրութիւնը և չեն գրուած հաշուապահական կարգաւոր թուահամարները, այլ կան հետևեալ ստորագրութիւնները՝ Тифлисскій Городской Голова *Г. Евангуловъ*, Члены Управы кн. *А. Аргутинскій—Долгоруковъ*, кн. *В. Черкезовъ, Е. Хосроевъ. իսկ կտրոնների և արմատների վրայ կայ* Тифлисскій Городскй Голова *Г. Евангуловъ ստորագրութիւնը։*

Անվաւերական յայտարարուածների փոխարէն բաց են թողուած Թիֆլիս քաղաքի նոյն երրորդ փոխառութեան նոր օբլիգացիաներ համապատասխան կտրոններով և արմատներով, և այդ օբլիգացիաների վրայ կան հետևեալ ստորագրութիւնները՝ И. Д. Тифлисскаго Городского Головы *М. Шестаковъ*, Члены Управы кн. *В. Черкезовъ, Т. Энфіаджіанцъ, Е. Хосроевъ, իսկ կտրոնների և արմատների վրայ այս ստորագրութիւնը՝*—И. Д. Тифлисского Головы *М. Шестаковъ.*

Նոր օբլիգացիաների օրինակները կգտնուեն Պետական Բանկում և Գայտութեան նրա բոլոր բաժանմունքներում։ (223) 3—1

Սոյն դեղը վճռուելու թոյլ է տրուած Վարշաւի բժշկական վարչութեան կողմից տակաւին ընդհանուր հիմունքներով։

ԵՍ ԱՆՆԱ ՀԻԼԼԷ ԱԳ

երկարացրել եմ իմ անսովոր երկայն (185 *սանտիմետր երկայնութեամբ*) *մազերը, որոնք յիշեցնում են Լորելէյի մազերը,—շնորհիւ իմ ներած առանձին օծանելիքի 14 ամսուայ գործածութեան։ Այս օծանելիքը ձանձրացած է իրեն մազերը թափանչել գէմ ամենայն միջոց, այդ պատճառով ես ստիպուած եղայ մազերի սամանը և նրանց արմատները պնդացնել. այս օծանելիքի շնորհիւ տղամարդու մազերը երկար աւազի կերպով աճում է, նոր առէջ* (մինչև անգամ կարճատև գործածութեան ժամանակ) *գլխի և մարմնի բոլոր մազերը բնական փայլ են ստանում. ընդամէն օծանելիքը մազերը պահպանում է վտանգաւոր ախտակիզուց ձեր հատակում։*

Մի բանկայի գինը

3, 5 և 8 րուբլի

Ստանելիք փոքր ատոյգած ժամանակ ուղարկում է պոստով ամեն օր աշխարհիս ամեն կողմերը ուղղակի գործարանից ուր և պիտի ուղղուին բոլոր ապսպրանքները։

ANNA CSILLAG

Wien I

Graben 14 52—22

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ ՀՍՏՍԱՏՈՒԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

(Баку, Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում ուսանւում են՝ 1) *Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ* 2) *Հաշուապահութիւն արդիւնաբերական գործարանական, առևտրական և բանկային* 3) *Առևտրական թղթակցութիւն* 4) *Առևտրական տնտեսագիտութիւն* 5) *Առևտրական և մերկանտիլ օրէնքներ.* 6) *դեղագրութիւն և արագագրութիւն* (*ուղղագրի ձեռագրի*). 7) *Ուսուցման գրոց մեքենայի վրայ։*

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

Կուրսերի կանոնագրութիւնը (устав) *և մանրամասն ծրագիրը* (программа)—*տրուում և ուղարկուում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները գիմում են* Баку, Учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову 30—7 208)

Փինանսների Նախարարութեան հրատարակութեան տակ գտնւող

ՀԱՇՏԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՈՍՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ Ֆինանսների Նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունուած է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՆՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։

ԳԱՐՄՈՒՆԻՆԳԻ ԱՇԱԿԵՐՏ ՆԵՐՆ ՆՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մերկանտիլային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագրութիւն մասնաւոր ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համրիչի վրա։ 7) Դրելու վարժութիւն «Բեմինգհամների» դրելու մեքենայի վրա (համաւոր)։

Դասերի համար դասատուներ են հրաւիրուած համալսարանական կրթութիւնով և իրանց գործին մասնագէտ մարդիկ, որոնք հասատատուել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. դեղագրութեան համար ևս հրաւիրուած է մի դեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5 մինչև 7 երեկ.։ Պարապմունքները սկսւում են 1903 թուի սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրւում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրուած ծրագրի համաձայն, ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրողին՝ Թիֆլիսում, Н. В. Абрамяну, Николаевская ул. №46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկուում է ձրի։

Վերևում յիշուած ձեռնարկը ծախուում է Ռուսիայի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3ր. 50 կոպէկ։

(216) 20—2

ԲՈՒԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

ՆՁԱՆԱԻՈՐ *է իւր յատկութեամբ*

ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՈՆ

Պահպանում է կաշւոյ փափկութիւնը և աւերացնում նրա սպիտակութիւնը։

Ц. К. О,

Գնորը 20 կոպ.

(М.) 148224 10—1

Дозволено Ценз. 8-го августа, 1903 г. Տպարան Վերէիչև Կամենմախերը Типографія Вереичевъ и Каменмахеръ Михайл. пр. Телеф. № 852